Title: POTTER'S HOUSE
by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ԲՐՈՒՏԻ ՏՈՒՆԸ
Դր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,
Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթիդրալ»-ում
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

# ԲՐՈՒՏԻ ՏՈՒՆԸ

Ես չեմ քարոզում այն ուղերձը, որը պատրաստել եմ: Ես զգացի, թե ինչպես Տերը խոսեց իմ սրտի հետ և ես պատրաստվում եմ հնազանդվել այդ ներքին մղմանը և գնալ այնտեղ, որտեղ այս եկեղեցու հետ եղել եմ ավելի, քան մեկ անգամ, այնտեղ, որտեղ Աստված ցանկանում է, որ մենք այսօր լինենք - Երեմիա 18:

«Այն խոսքը, որ Տիրոջ կողմանե եղավ Երեմիային ասելով. Վեր կաց իջիր բրուտի տունը, և այնտեղ ես քեզ լսել տամ իմ խոսքը: և ես իջա բրուտի տունը, և ահա նա բան (անգլերենում՝ գործ) էր անում ճախարակների վերայ»:
Իմ բոլոր Աստվածաշնչերի լուսանցքներում ես գրել եմ Գ. Կամբել Մորգանի թարգմանությունը. «Ահա, Նա բան էր անում ճախարակների վրա» «և ավերվեցավ այն ամանը, որ բրուտը շինում էր, և նա դարձավ ու մի ուրիշ ամաև շինեց»: Եվ սա Մորգանի թարգմանության հավաստիությունն է. անկախ նրանից, թե բնօրինակը պարզ է, թե ոչ, ակնհայտ է, որ դա ինչ որ հազվադեպ, արվեստի ազատ ստեղծագործություն չէ, այլ նպատակասլաց աշխատանք: «Բրուտը բան էր անում ճախարակների վրա». քանզի երբ ամանը ավերվեցավ բրուտի ձեռքերի մեջ, «նա դարձավ ու մի ուրիշ ամաև շինեց, ինչպես որ բրուտի աչքին հաճելի էր անելու»:

6-րդ խոսքից պարզ է դառնում, որ սա վերաբերում է մարդ -Աստված փոխհարաբերությանը: «Միթե ես չեմ կարող այս բրուտի պես անել քեզ, ով Իսրայելի տուն, ասում է Տերը. ահա ինչպես որ կավն է բրուտի ձեռքին, նույնպես եք դուք իմ ձեռքին»: Մինչ այժմ ես այս գլխի վերաբերյալ քարոզել եմ հավանաբար հարյուր անգամ, բայց քանի որ այն իր մեջ ունի բազում աստվածային ճշմարտություններ, ապա դուք պետք է լսեք և հասկանաք դրանք:

75 գերմանացի քրիստոնյաներ 1727 թվականին աղոթում էին և փնտրում Աստծո երեսը, և Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ու սկսվեց Մորավյան արթնությունը: Այդ 75 գերմանացի քրիստոնյաները դուրս եկան և շատ կարճ ժամանակահատվածում Աստծո համար կատարեցին ավելի շատ միսիոներական աշխատանք, քան ողջ եկեղեցին՝ 200 տարվա ընթացքում:
Կոմս Ցինցինդորֆը գրել է նրանց աշխատանքի և կյանքի մասին:

Նրանց կյանքը ազդեցություն է ունեցել Չարլզ և Ջոն Վեսլիների վրա: Չարլզն ունեցավ Աստծուն նվիրվելու ավելի խորը վերապրում: Նա և Ջոնը՝ փորձառու անգլիկանական քարոզիչը, նավով անցնում էին Ատլանտյան օվկիանոսը, երբ փոթորիկ սկսվեց, որը վախեցրեց նավաստիներին: Նավի վրա միայն մորավյաններն էին, որ չվախեցան. Ջոնը մոտեցավ Մորավյան քրիստոնյաների այդ փոքրիկ խմբին, որոնք ոչ թե աղոթում էին, այլ երգում: Նա ասաց. «Ինչու՞ չեք աղոթում»: Նրանք պատասխանեցին. «Եթե Աստծո կամքն է, որ

մենք խորտակվենք այս փոթորկից, ապա մենք անմիջապես կմտնենք Նրա փառքի մեջ, իսկ դա մեր բոլորի ցանկությունն է»: Ջոնը սկսեց խոսել նրանց ավագի հետ և հարցրեց, թե ինչ նրանք ունեն. նա ցանկանում էր այն, ինչ Չարլզը արդեն ստացել է Աստծուց: Եվ նրանք էլ ունեին դա: Նրանց ավագն ասաց, որ դա շնորհքով է:

Ջոնը շարունակեց. «Ես չունեմ դա: Արդյո՞ք պետք է դադարեմ քարոզել»: Եվ Մորավյանների շատ իմաստուն ավագն ասաց. «Ոչ, քարոզիր *շնորհք*, որովհետև այն Աստվածաշնչի մեջ է: Երբ դու կստանաս այն, քարոզիր դրա մասին, որովհետև դու ունես այն, բայց սկզբից քարոզիր դրա մասին, որովհետև այն Խոսքի մեջ է»:

Ինչքան ավելի եմ մեծանում և ինչքան ավելի եմ ծառայում Տիրոջը, այնքան ավելի եմ հասկանում, որ Աստված այնքան բարի է, որ թույլ է տվել ինձ թափանցել Իր Խոսքի մեջ: Կան շատ բաներ, որ քարոզել եմ Նրա Խոսքից և կարծել եմ, թե հասկացել եմ, բայց հիմա ես գիտեմ, որ ես միայն դիպչել եմ դրանց և ընդամենը մի նշույլը գիտեմ: Աստծո հետ կյանքն առաջ է բերում պատվաստման իրականությունը, քանի դեռ ճշմարտությունը չի ներաճել քո մեջ, դու չես կարող հասկանալ այն: Ահա թե ինչու Խոսքի որոշ հատվածներ, որոնք դու կարդացել ես հարյուրավոր անգամ, ինչպես որ Կառլ Բարտն է ասել, «գազանի նման կցատկեն և կբռնեն քեզ» քո քրիստոնեական ճանապարհի որոշակի կետում, որովհետև նրանք իմաստ են տալիս նրան, ինչ տեղի է ունենում քո կյանքում և փորձառության միջոցով ուղղություն տալիս:

Ինձ թվում է, թե ես երբեք չեմ քարոզել բրուտի տան մասին, որովհետև Աստված նոր ճշմարտություններ է բացում և ես հույս ունեմ, որ դրանք հասնում են ձեզ այսօր, որովհետև ես երբեք ցանկություն չեմ ունեցել պարզապես քարոզ քարոզել: Ինչպես գիտեք, «քարոզ» բառը (անգլերենում՝ sermon) գալիս է լատիներեն sermo բառից, և Հովհաննեսի ավետարանը բացում է այն. «Սկզբում էր «sermo»-ն և «sermo»-ն Աստծո մոտ էր, և «sermo»-ն Աստված էր»: Կա միայն մեկ «Քարոզ». դա այն է, երբ Աստծո կյանքը, որը հայտնվեց Քրիստոսի մեջ, ներթափանցում է քո մեջ, և դու լսում ես այդ «ուրիշ Ձայնը» և մոռանում քարոզչի մասին: Ես ցանկանում եմ, որ այսօր դա կատարվի: Չեմ ցանկանում, որ որևէ մեկի ուշադրությունը շեղվի Աստծո Խոսքից և Աստծուց, Ով այսօր կարող է խոսել մեզանից յուրաքանչյուրի հետ:

Եթե դեռ չեք հասցրել գրի առնել, ապա ես ցանկանում եմ, որ չորս բառ գրեք ձեր Աստվածաշնչի լուսանցքում, որովհետև այդ չորս բառը թույլ կտան ինձ վեր հանել այս լուսաբանման ճշմարտություններն այնպես, որ դուք կարողանաք մտապահել դրանք: Կան շատ քարոզներ, որոնք նման են սերմնացանի առակում ճանապարհին ընկած սերմին: Մի ուղերձը աննշան հետք է թողնում մեզ վրա, և ահա գալիս է մյուսը և նորից աննշան հետք թողնում, ու ոչինչ չի մխրճվում մեր մեջ: Երբ Սուրբ Հոգով օծված Աստծո Խոսքն է գալիս, այն պետք է ներթափանցի մեր մեջ: Երբ Պետրոսը քարոզում էր Պենտեկոստեի օրը, այդ ծաղրող ամբոխի մասին ասվում է, որ «իրանց սրտերումը զղջացին, և ասեցին…. ինչ անենք, որ փրկվենք»:

Եվ հիմա. «Այն խոսքը, որ տիրոջ կողմանե եղավ Երեմիային», ես ցանկանում եմ, որ դուք չորս խոսք գրի առնեք 18-րդ գլխի երկայնքով. «սկզբունք», «նպատակ», «գործընթաց» և «անձ»: Աստված ամենաուժեղ մարդկանց, որոնց հետ երբևէ գործ է ունեցել, և դա շատ կարևոր է ինձ համար, ստիպել է սովորել բրուտի տան դասը: Եվ Նա ստիպել է նրանց այն սովորել այնպիսի համատեքստում, որ մեկընդմիշտ հասկանան, որ Աստված այդպես է վարվում Իր ժողովրդի հետ:

Դուք երբեք չեք գտնի որևէ մեկին մարդկային մարմնով, որն ավելի պինդ լիներ, քան Երեմիան: Մինչև գոտկատեղ նա ընկղմված էր տիղմով և ճահճով լցված զնդանում ոչ այլ բանի, քան Աստծո Խոսքը քարոզելու համար: Եվ նա, դեմ առ դեմ կանգնելով պարզորոշ ճակատագրի առջև, զոհաբերություն է ուղարկում՝ հռչակելով իր հավատքն առ Աստված, ապա արհամարելով իրավիճակը, այնպես է անում, որ իր ազգականը Աստծո հսկողությամբ Անաթովթում ներդրում կատարի իր ժառանգության մեջ, քանզի Աստված և միայն Աստված է վերահսկում ցանկացած իրավիճակ, որի մեջ նա հայտնվում է:
Նա պինդ մարդ էր:

Մենք գիտենք, որ Զաքարիան այն կրակի բոցն էր, որը բոցավառեց Աստծո ժողովրդին, որ գերությունից վերադառնալով կառուցեն տաճարը: Նա պինդ էր: Երբ բոլորը պատրաստ էին թողնել սկսած գործը, ծեր Անգեն և երիտասարդ Զաքարիան նրանց եռանդ հաղորդեցին գործը շարունակելու համար: Աստված տարավ նրան բրուտի տուն:

Նոր կտակարանի մեջ Պողոսից պինդ ոչ ոք չկար: Այն, ինչ նա տարավ, ես համոզված եմ, որ անգամ մեկ օր չէի կարող տանել: Չնայած դա երբեք նրան չկանգնեցրեց: Աստված նրան ուղարկեց բրուտի տուն: Հոսիայի մահից հետո երբ ամենքը թողել էին Աստծուն, Եսայիան տեսավ Տիրոջը՝ գահի վրա նստած:

Սրանք են այն մարդիկ, որոնք իրականում ուղղություն են ցույց տվել իրենց համառությամբ, որոշումներով, համարձակությամբ, կամքի ուժով, կարողություններով և հնարամտությամբ: Ուր էլ գնային, նրանք իրենց ետևից հետք էին թողնում: Աստված ընտրեց նրանց: Մինչ Նա կկարողանար առավելագույնս օգտագործել նրանց, նրանք պետք է սովորեին բրուտի տան դասը: Դուք վերցնում եք բրուտի տան ուղերձը և փորձում եք այն առավելագույնս հարմարեցնել այն քարոզին, որն այսօր տղամարդկանց և կանանց կգրավի դեպի Աստված, և դա նման կլինի մի աններդաշնակ տհաճ ձայնի, որովհետև այդ ժամանակ Աստված կարծես փաթեթավորված լինի արկղի մեջ (չնայած Նա երբեք դրա համար նախատեսված չի եղել), Աստված ինչ-որ տեղ փաթեթավորված է արկղի մեջ՝ կարծես կարիք ունենալով ապրանքի նոր խմբաքանակի, որը կարող է մարդուն բերել դեպի Աստված, կարծես փառքի Տերը դողալով սպասում է, թե երբ Իրեն կընդունեն:

Բրուտի տան դասը այդ ամենը շրջում է և հստակեցնում, և այն հանգամանքը, որ ամենաբարդ մարդիկ, որոնց հետ Աստված երբևիցե գործ է ունեցել, պետք է սովորեին այս սկզբունքները, ինձ ինչ-որ բան է ասում: Այսպես կոչված «Աստծո կամքը» գտնելու մեր շարունակական փորձերն իրականում ոչ այլ ինչ են, քան հասնել նրան, որ Աստված հավանություն տա մեր կամքին: Եվ այն, ինչ որոշ մարդիկ անվանում են շփոթություն և պայքար, երբ գործ են ունենում Աստծո հետ, ի վերջո հանգում է նույն բանին. մենք ցանկանում ենք, որ Աստված հաստատի մեր կամքը, կամ ինչ-որ աստիճանով կամ որոշ չափով փոխի Իր անսասան կամքը, որպեսզի ավելի հեշտ կարողանա հարմարվել մեզ և մեր ցանկություններին:

Բրուտի տունը հստակեցնում է ամենը: Աշխարհի տարբեր ծայրերում ես եղել եմ կավագործների արհեստանոցներում: Շատ տարիներ ես քարոզել եմ այս գլխի շուրջ: Ինձ համար սովորություն է դարձել այն, որ երբ հայտնվում եմ պարզ հասարակության մեջ, որտեղ կավագործի աշխատանքը՝ որպես արհեստ, դեռ պահանջարկ ունի, ես փնտրում եմ բրուտի տուն՝ սկսած Կոլումբիայի և Բոլիվիայի բարձրավանդակներից մինչև Կալկուտայի շոգ անապատները: Դրանք բոլորն էլ

նույնն են: Այնտեղ կա կավագործ, կավ և անիվ: Դրանք են անհրաժեշտ տարրերը: Կավը կարող է տարբերվել իր տեսակով կամ գույնով, բայց միշտ առկա են կավագործը, կավը և անիվը: Երբ նայում եք, ի հայտ է գալիս այն սկզբունքը, որ կավը ոչ մի իրավունք չունի: Քանի որ Աստված այս առակի մեջ կավագործն է, Նա Ինքն է այսպես մեկնաբանում սկզբունքը. Աստված՝ որպես կավագործ, կարող է անել այն, ինչ ուզում է: Նա ունի բացարձակ իրավունք իրագործել Իր կամքը կավի վրա:

Հիմա Եսայիան՝ այդ պինդ մարդկանցից մեկը, գրվածքներից մի հատվածում պատկերացնում է մի ծիծաղելի իրավիճակ՝ անելով հետևյալ արտահայտությունը. «Մի՞թե կավը կասե իր կազմողին, թե ինչ ես անում»…«Ի՞նչ ես անում ինձ հետ»: «Ի՞նչ ես ինձնից պատրաստում»: «Պարզապես դադարեցրու պտտելը և ձևավորելը և նորից փշրելը, բավական է, դադարիր, եկ խոսենք և թույլ տուր ինձ հասկանալ, թե ինչ ես դու ինձ հետ անում, միգուցե դա ինձ դուր չգա»: «Մի թե կավը կասե իր կազմողին, թե ինչ ես անում» : Հիմարություն: Աստված ունի ողջ իրավունքները:

Դուք լսել եք ինձ՝ սրա մասին քարոզելիս: Ես լսել եմ, թե ինչպես են ամեն ինչը մեղք անվանում՝ սկսած ավտոմեքենայից մինչև ծալված վերնաշապիկը: Օրովիլում ասում են, որ երբ իմ հայրիկը գնում է Ազատ Հոգեգալստական Եկեղեցի, նա կարող է քարոզել օծության ներքո, միայն եթե հանի իր փողկապը»: Ես լսել եմ, թե ինչպես են ամեն ինչը մեղք անվանում: Այդ ամենը գալիս է մեկ արմատից. Եսայիան ասաց. «Մենք ամենքս ոչխարների պես մոլորուեցանք, իւրաքանչիւրն իր ճանապարհին դառավ»: Դու չպետք է մտածես, որ դա կփոխվի միայն այն պատճառով, որ դու եկեղեցում ես: Դու չպետք է մտածես, որ դա կփոխվի միայն այն պատճառով, որ դու վերապրում ես ունեցել Աստծո հետ: Ես տեսնում եմ, որ եկեղեցում գտնվող մարդիկ ավելի հաստատակամ են իրենց ուզածով շարժվելու մեջ, քան բոլոր մեղավորները, որոնց ես հանդիպել եմ իմ կյանքում: Եվ այդպիսիք ամենավատ տեսակն են, որովհետև նրանք որսում և քչփորում են Սուրբ Գիրքն այնքան ժամանակ, մինչև չգտնեն խոսք իրենց արդարացնելու համար:

Մեղքն արմատացած է իմ ուզածով շարժվելու ցանկության մեջ, և այդ արմատն անխուսափելիորեն ծնում է մեղքի այն հետևանքը, որն Աստված ատում է: Ցանկությունը մեղք գործելը չէ, բայց մենք ապականված ենք, ինչպես Պողոսն է ասում, «մարմնի ցանկություններում»: Ապականությունը ապստամբություն է ծնում, և դա հենց այն մեղքն է, որի հետ Աստված խնդիրներ է ունենում: Մենք մի որոշակի կետ ենք անցել: Այժմ մենք ոչ միայն մերն ենք ուզում, այլև ըմբոստանում ենք այն ամենի դեմ, ինչը փորձում է կանգնեցնել դա: Սա նման է անսանձ ձիու, որի ատամներին չես կարող սանձ դնել:

Լսեք, ես մի անգամ այդպիսի ձի ունեցել եմ: Իմ հորեղբոր որդին վարժեցրել էր նրան, դա ամենաարագ ձին էր, որ ես երբևիցե տեսել էի: Նա հաղթել էր բոլոր մրցաշարերում, որոնց մասնակցել էր և իմ հորեղբոր որդին այնպես էր նրան վարժեցրել, որ երբ դու սեղմում էիր քո ծնկները, նա պատրաստ էր թռչելու: Դե, ամենաբնական արձագանքը, երբ ձի ես նստում, ծնկները սեղմելն է: Երբ առաջին անգամ ձի նստեցի, ես սեղմեցի ծնկներս և օդում հայտնվեցի. ձին չքվել էր: Երբ սանձ չկա ատամներին, ձին ըմբոստանում է:

Բրուտի տունը ինչ-որ բան է սովորեցնում, և ես ցանկանում եմ սովորել դա: Ինձ թվում էր, թե ես սովորել եմ այդ դասը, բայց ես իսկապես ցանկանում եմ սովորել այն: Աստված նպատակ ուներ և Նա չուղարկեց Իր Որդուն, որ մահանա և էժանագին շնորհք տա, ինչպես Թոզերն է ասում, Նա չի մեկնել գլխարկը մարդկային սրտերի առջև՝ ակնկալելով, որ նրանք վերջապես ուշադրություն կդարձնեն Նրա վրա: Աստծո նպատակն էր լրացնել բացը երկնքում, որն առաջացել էր Արուսյակին վռնդելուց հետո: Մտածելով ծովի մակերեսի մասին, որին զարկեց ջրհեղեղը՝ Նա ասաց. «Մեր պատկերովը մարդ շինենք,..» և ստեղծեց մարդուն՝ նպատակով: Այդ նպատակը ներառում էր, ինչպես Նեյրուբն է ասում, «մեր մեջ Աստծո պատկերի բնածին որակը»:

Աստծո պատկերի էությունը ինքնահաստատումն է, ինքնահաստատման ստեղծագործական կարողությունը: Դա Աստծո ազատ կողմն է, որը ստիպում է մեզ ասել. «Փառք Աստծուն»: Բայց ոչ Պուրիտանների նման, որոնք ասում են. «Որպեսզի Աստված Աստված լինի, պետք է բարի լինի»: Որպեսզի Աստված Աստված լինի, պարզապես պետք է ամենակարող լինի: Պարտադիր չէ, որ Նա բարի լինի, բայց Նա այդպիսին է: Նա ապացուցել է Իրեն՝ բացարձակ զորությամբ և հայտնել է Իրեն՝ հավատարիմ և բարի, ունենալով այլ կերպ լինելու ազատություն: Այդ ամենը Նա դրել է մեր ներսում. Նա ստեղծել է մեզ Իր պատկերով և այնպիսի փոքրիկ կարողությամբ, որը կարող է ապականել ազատությունը՝ ընտրելով այլ բան, քան Նա է ցանկանում: Դա այնքան անհեթեթ է, որքան գնացքին պատասխան տվող մրջյունը, բայց Աստված մեքենա չի ստեղծել: Նա ցանկանում էր ուրիշ որդիներ Իր թանկագին որդու նման և Նա մարդու մեջ դրեց այդ կարողությունը, որն ազատությունն է, որը Աստվածային էություն է: Մարդը սխալ օգտագործեց այն և շարունակում է սխալ օգտագործել, և դա է մեղքի արմատը:

Աստծո կամքի և մեր ցանկության միջև ընտրության հարցում յուրաքանչյուրի կյանքում իմ առջև անխուսափելիորեն մի գլուխ է գրված. «Մենք ամենքս ոչխարների պես մոլորուեցանք, իւրաքանչիւրն իր ճանապարհին դառավ»: Մենք մեղք ենք անվանում այսպես կոչված գրացուցակը, որն իմիջիայլոց կարող է ամբողջը կտրտվել: Վարքագծի ցուցակի համաձայն ես կարող եմ դառնալ քաղաքում ամենասուրբ տեսք ունեցող մարդը, այսպիսի բաները մենք մեղք ենք անվանում, եթե դու հոգ չես տանում արմատի մասին…: Աստված տեսնում է սիրտը, իսկ մեղքը սա է. «Ես ցանկանում եմ իմ ուզածով շարժվել»: Բրուտի տունը սովորեցնում է, որ միայն մեկ եղանակ պետք է լինի Նրա տանը, որովհետև բրուտի տունը Նրա տունն է: Նա ցանկանում է այնպիսի կավ, որը պատասխան չի տալիս: Նա ցանկանում է այնպիսի կավ, որն Իր ձեռքերում է: Նա ցանկանում է այնպիսի կավ, որը հանձնվում է:

Վերադարձիր վերջին երկու շաբաթվա յուրաքանչյուր ուղերձին: Սաղմոս 84-ում այն ճանապարհը, որը տանում է դեպի Աստծո ներկայություն, որտեղ կանգնած է Զորաց տերը, զոհասեղանի մոտ է: Զոհասեղանի վրա մահանում ես և ճանաչում Աստծո բացարձակ իրավունքները: Բրուտի տան սկզբունքները տեսանելի են դարձնում այն ամենը, ինչը մենք շաբաթների ընթացքում ասել ենք Աստծո խոսքից: Ես չեմ կարող ձեզ ստիպել կատարել դա: Ինչպես մենք քարոզում էինք անցած կիրակի, մինչև Աստծո խոսքը մեր մեջ չգտնի այն շարժող սարքը, որը նրա պատկերի մնացորդն է, դա չի կարող արմատ գցել մեզանում: Եթե մեր մեղքը հասել է այնպիսի ըմբոստության, որ մենք այն ետ ենք նետում և մեզ չենք վերագրում ..

Ինչու եմ ես միշտ սկզբից ինձ քարոզում, դուք երբեք չեք լսել մի քարոզ, որը չի անցել Ժենե Սքոտի միջով մինչև, որ հասել է ձեզ: Շարժվելով նրա մեջ, ինչը իմ համոզմամբ Աստված անում է ինձ հետ և պատրաստվում է անել այս եկեղեցու հետ, եկեք հստակ լինենք: Մի գուցե իմ ավելի վաղ կատարած նշումները ոչ այդքան բարի էին: Ես չեմ ցանկանում, որ մենք, սկսելով հոգով, ավարտենք մարմնով և բռնված լինենք մեր սեփական հոգևոր հպարտությամբ ու այն որոշումով, թե մենք պարզել ենք Աստծո ցանկությունը: Ես չգիտեմ, թե Աստված ինչ կաներ, եթե ես չլինեի այն մեկը, որը աղոթել է դրա համար: Կա միայն մեկ տեր՝ Աստված: Դա է սկզբունքը:

Ի՞նչ է նա ցանկանում: Քանի որ իմ և Նրա ցանկությունների միջև կա ընտրություն, ապա ի՞նչ է Նա ցանկանում: Աստված երբեք չի փոփոխվել Իր ցանկությունների մեջ: Ահա և երկրորդ բառը՝ «նպատակ»: Աստված ազատ ոճի բրուտ չէ: Կրկնիր սա ինձ հետ, երբ Նա արարեց մարդուն, ինչ Նա ասա. «Մեր պատկերովը և մեր նմանութեան պես մարդ շինենք..»: Աստված հանձնակատար չէ: Աստված մատուցող չէ: Աստված ծառայապետ չէ: Աստված բանկատեր չէ: Աստված խոհարար չէ: Աստված անգամ հրահանգիչ չէ: Առաջինը և ամենագլխավորը՝ Նա բրուտ է, որի նպատակն է վերցնել այս կավի գունդը և ձևավորել այն: Մեզ հետ Նրա խնդիրը կայանում է նրանում, որ մենք բազմապիսի ձևեր ենք տալիս այս կավե ամանին: Երբ Աստծո Հոգին գալիս է, Նոր կտակարանի գրողներից մեկը Աստծո Հոգու վերաբերյալ ասում է. «Մենք ունենք այս գանձը հողե ամանում», մեկ այլ թարգմանություն ասում է. «Մենք ունենք այս գանձը կավե ամանում»:

Աստված ստեղծել է մարդուն, Իր պատկերը դրել նրա մեջ, քայլել և խոսել է նրա հետ, և իր անմեղությամբ մարդը կարող էր մեծանալ Աստծո հետ միասին: Մարդը կորցրեց դա: Աստված ասաց. «Մեղքի վարձքը մահն է»: Մարդու հետ ունեցած Աստծո խնդիրը Աստծո և մարդու միջև պատնեշն էր, որն առաջացավ Նրա մաքրության և մարդու մեղանչելու պատճառով: Ինչպես ոչխար՝ նրանք ընտրեցին իրենց ուղին: Նրանք ցանկացան ծառը և նրա պտուղը, որի հետևանքով էլ առաջացավ այդ պատնեշը: Եփեսացիների թղթում ասվում է, որ Աստված քանդեց այդ բաժանումը մեր և Աստծո մեջ: Եվ Իր սիրելի Որդին, որը Աստծո համար ավելի թանկ էր, քան մենք բոլորս միասին, զրկվելով երկնքի փառքից և հակառակ Իր ցանկությանը աղոթքում հայտնեց Իր կյանքի նպատակը, երբ ասաց. «Հայր, եթե կամիս այս բաժակը անցրու ինձանից. Սակայն ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»: Նա Գողգոթայում տվեց Իր կյանքը, Իր վրա վերցնելով մեր բոլոր մեղքերը, և որպես միջնորդ՝ վճարեց յուրաքանչյուր մեղքի համար՝ թե անցյալ, թե ներկա և թե ապագա: Այդ ամենը Նա արեց ոչ թե պարզապես նրա համար, որ մենք կարողանանք երկինք գնալ և ճոճվել ամպի վրա, քնարի վրա նվագել և քայլել ոսկյա փողոցներով, այլ որ Նա՝ որպես բրուտ, կարողանա Իր ձեռքերը դնել վերականգնված կավի վրա և վերամշակել այն:

Փրկությունը (հունարենում –*soterion*),շարունակական գործընթաց է: Անցած երեկո՝ տոնախմբությանը, ես սովորեցնում էի Փիլիպեցիս գրքից այն մասին, որ մենք պետք է գործենք, այսինքն՝ ավարտին հասցնենք մեր փրկությունը, և ոչ թե աշխատենք մեր փրկության համար: Լինելով փրկված, Քրիստոսի մեջ մենք պետք է գործընթացը իր ավարտին հասցնենք: Մենք պետք է եռանդուն կերպով կառչենք դրանից: Այստեղ կա նաև հակադարձ կողմը: Պատնեշը կոտրվեց, որպեսզի Աստված կարողանար հասնել, ձեռք բերել և հասկանալ Պողոսի խոսքերով ասած այդ կավի գունդը, նրա մեջ դներ Իր Հոգին և ձևավորեր այն:

Աստված չի սուլում կամ աղաղակում նրա համար, որ Ժենե Սքոտը մեծ քարոզիչ է: Նրան չի հետաքրքրում այն, որ քաղաքը տեսնում է, թե ինչպես է ամբոխի հոսքը դուրս գալիս այս շենքից: Աստված մեկ բան է ցանկանում: Նա ցանկանում է, որ Իր պատկերը արտահայտվի մեզանում: Սա է այդ երկակի բնույթը, որի մասին մենք քարոզում էինք անցած կիրակի. մեր էության մեջ գտնվող այդ փոքր աղավնին, որի հետ Սուրբ Հոգին կարող է գտնել միաձուլման տեղ և մեր էության մեջ գտնվող ագռավը, որը մեր մարմինն է և նրա ցանկությունները, որոնց հետ կարող է մակարդվել չարի այդ գերբնական ուժը՝ դժոխքից դուրս եկող ագռավը: Աստված ցանկանում է, որ այն էությունը, որը տնկված է մեր մեջ, ընդունակ լինի միաձուլվել Սուրբ հոգու հետ և ձևավորել Աստծո պատկերը մեզանում: Սա այն ամենն է, ինչ Նա ցանկանում է: Նա ցանկանում է դուրս մղել մեզանից ողջ աղբը և ավելցուկները: Աստծո Գրքի յուրաքանչյուր հատված խոսում է սրա մասին:

Դուք գիտեք իմ վերաբերմունքը խոստումի արկղերի վերաբերյալ: Եթե նրանք օգնում են ձեզ, օգտագործեք դրանք, բայց ինչպես որ Ֆոլլետն է ասում, դրանք սովորաբար նման են նրան, որ մեկը փնտրում և գտնում է Խոսքից պոկված մի հատված և մահակի նման հանում է այն և փորձում խփել Աստծո գլխին՝ ասելով. «Ես գտա այն: Միգուցե Դու չես ցանկանում կատարել դա, բայց ես Քեզ բռնել եմ: Ավելի լավ է՝ անես դա»: Հռոմեացիս 8:28-ն ասում է. «Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին նորանց՝ որ նախասահմանելովը կանչուած են»: Բառացիորեն Հունարենում այսպես է գրված. «Աստված մտնում է բոլոր բաների մեջ», ներառյալ այն խառնաշփոթը, որը մենք ստեղծում ենք մեր ըմբոստ ինքնածառայող էությամբ: «Աստված մտնում է բոլոր բաների մեջ»:

Որոշ մարդիկ այնքան հակված են չափազանցնել ցանկացած իրավիճակ: Նրանք վազվզում են և շշնջալով ասում, որ գիտեն թե Աստված ինչ է պատրաստվում անել: Մեր խառնաշփոթից շատը մենք ինքներս ենք ստեղծել, բայց դա չի նշանակում, որ հույս չկա: Հունարենում Հռոմեյացիս 8:28-ի բառացի թարգմանությունը այսպես է. «Աստված մտնում է բոլոր բաների մեջ»: Ինչպես բրուտի ձեռքը՝ վնասված անոթի մեջ՝ Աստված մտնում է յուրաքանչյուր իրավիճակի մեջ, որը դուրս է եկել Իր նպատակների համապատասխանությունից: «Նա մտնում է բոլոր բաների մեջ և բարին է գործում նրանց մեջ, որոնք կանչված են Իր նախասահմանությամբ»: Որն է Նրա բարին: Ես արդեն ասացի, որ դա ինձ հարուստ դարձնելը չէ: Նա չի պատրաստվում մեզ համար բանկատեր լինել՝ իմ փոփոխվող ցանկությունների մատակարար: Նրա բարին 29-րդ խոսքն է:

Եթե ես ունենայի բավականաչափ գումար և կարողանայի գնել աշխարհի բոլոր խոստումների արկղերը, ես կհանեի նրանց միջից Հռոմեյացիս 8:28-ը, եթե միայն 29-ը չմիացնեն 28-ին: Որովհետև 29-ը ասում է, թե ինչն է բարին: Այդ երկու խոսքերի ամփոփումն է. «Նա մտնում է բոլոր բաների մեջ և դեպի բարին է գործում նրանց մեջ, որոնք կանչված են Իր նախասահմանությամբ»: Այսպիսով, որն է Նրա բարին. որ մենք «իր Որդու պատկերին կերպարանակից» լինենք: Շատ մարդիկ ասում են. «Դե գիտես ինչ, Աստված է պատճառ հանդիսանում, որ դա կատարվի»: Հիմարություն: Երբեմն մենք շեղվում ենք և ինքներս ենք պատճառ հանդիսանում, որ դա կատարվի:

Աստված մեզ բոլորիս չի լարել ինչպես ժամացույցների մի խուրց, որովհետև Նրա ցանկությունն է, որ կամքը վերջնականապես հանձնվի և կատարվի ազատ տրվող ընտրություն, առանց որի սերը չի կարող արտահայտվել: Այսպիսով մենք

դա խառնել ենք: Հետո հին պնդաճակատ ոչխարի բնույթն է վերադառնում, և մենք սկսում ենք փնտրել մեր ուղիները: Այժմ Աստված է ներս մտնում: Նա սկզբից մեկ նպատակ է ունեցել: Այդ նպատակն է մեզ Իր պատկերի պես դարձնելը, և Նա սկսելու է ձևավորել մեզ, երբ մեր կամքը հանձնվի, և թույլ տանք Նրան իրագործել այդ նպատակը, որն է՝ յուրաքանչյուրիս մեկ առ մեկ դարձնել Իր նման: Ժամանակահատված:

Եփեսացիս թուղթը, որը ես վկայակոչեցի, ասում է, որ մեր և Աստծո միջև պատնեշ կար: Աստված իր շնորհքով տվեց մեզ Իր Որդուն, քանդեց այդ պատնեշը, և այժմ մենք Նրա հոգու միջոցով դարձանք Աստծո բնակության վայր և ունենք այս «գանձը հողե ամանի մեջ»: Բառացիորեն, ինչպես Աստծո էությունը անցավ քարի և փակված դռան միջով և արձակեց Աստծո փառքը, հենց այդ էությունը, որը Հունարենում hupostasis է նշանակում, բառացիորեն Աստծո էության այդ բնույթը, այժմ գալիս և միանում է մեզ և ներթափանցում է իմ էության մեջ և արմատ գտնում իմ էության այն մասում, որը հանդիսանում է Աստծո պատկերը և կարող է արձագանքել Նրան: Եվ երբ պատնեշը քանդվեց, և Աստծո հոգին եկավ, մենք Հոգու միջոցով դարձանք Աստծո բնակատեղի:

Արդյո՞ք դա նշանակում է, որ հին մարդը՝ իմ ներսի սև ագռավը, հեռացավ: Ոչ, այն դեռևս մեր մեջ է: Այդ իսկ պատճառով Պողոսը ասում է, որ մենք պետք է ամեն օր խաչենք նրան: Արդյո՞ք դա նշանակում է, որ Նրա գալուստով ամեն բան շտկվեց, և Աստծո աշխատանքը վերջացավ, հիմա ես կարող եմ արդեն ցատկոտել իմ փոքրիկ կավե ամենի շուրջ և անել այն, ինչ ցանկանում եմ: Պողոսը աղոթում է, որ նրանք իմանան, թե ինչ է լայնությունը և երկայնությունը և բարձրությունը ու խորությունը նրա, ինչը նրանց հասանելի է Աստծո մեջ: Այնուհետև նա այն սուրբերին, որոնք իրենց մարմինները տվեցին, որ Աստծո Սուրբ հոգին բնակվի իրենց մեջ, ասում է. «Աստված մի քանիսին տվավ առաքյալներ լինելու, մի քանիսին ավետարանիչներ, մի քանիսին հովիվներ և վարդապետներ, Սուրբերի կատարելութեան համար…»: Այս խոսքը նշանակում է հասնել նպատակի լիարժեք իրականացմանը: «Սուրբերի կատարելությունը» կատարվում է եկեղեցուն տրված ծառայության պարգևների միջոցով, որոնք մեզ բոլորիս բերում են հավատքի միությանը, մինչև մեր բաժանված պատկերացումները այն մասին, թե ինչ պետք է լինի…. վերածվեն մեկ էության, և «մենք բոլորս գանք կատարյալ մարդու ճանաչելությանը»:

Մեզ տրված է հասկանալ, թե որն է կատարյալ մարդը: «Եվ Բանն Աստծո մոտ էր». նույն էությամբ, ինչպես Աստված, «և Բանը մարմին եղավ՝ եւ բնակուեց մեր մեջ»: Հովհաննես 1:18-ում ասվում է. «Աստծուն ոչ ով երբեք չէ տեսել. բայց միածին Որդին… պատմեց» - exegesis, «հանեց վարագույրի ետևից և ի հայտ բերեց»: Ահա ինչի է նման Նրա բնույթը: Աստծո նպատակը երբեք չփոխվեց: Նա հատեց նմուշ հանդիսացող մետաղադրամը՝ Եբրայեցիս գրքում նշված Հիսուսի անվան յոթ բացատրություններից մեկը: Նա մետաղադրամի բացարձակ նմուշ է, որը հատվեց մարմնում, մի նմուշ, որից պետք է հատվեին մնացած մետաղադրամները: Աստված հատեց այն մարմնում, և չնայած «Աստուծուն ոչ ով երբեք չէ տեսել», Հիսուսը Նրան հանեց վարագույրի ետևից և ի հայտ բերեց մարմնի մեջ: Ահա ինչ է նշանակում լինել Նրա նման:

Որպեսզի եփեսացիները, որոնց մեջ բնակվում էր Աստծո Հոգին և որոնք ունեին այդ լիցքավորված կյանքի բնույթը, կարողանային տարբերել հին մարդուն, որ դուրս է գալիս, և նոր մարդուն՝ Քրիստոսում, Աստված եկեղեցուն տվեց

ծառայության պարգևները, որոնք ոչ զոհաբերություններ հավաքելու համար էին, ոչ սուրբերին մերսելու, ոչ սոցիալական ծրագրեր իրականացնելու, ոչ բանկատեր, ոչ ծառա կամ դռնապան լինելու, և ոչ էլ արցունքներ սրբելու համար: Նա եկեղեցուն տվեց այդ ծառայության պարգևները «Սուրբերի կատարելութեան համար, պաշտոնի գործի համար…Մինչև որ ամենքս հասնենք հավատքի … միութեանը», ինչին կարելի է հասնել միայն «կատարյալ մարդու ճանաչելության» միջոցով, այս գրքից մենք գիտենք, թե դա ինչի է նման, մինչև որ «կատարյալ մարդ լինենք Քրիստոսի կատարեալ հասակի չափովը»:

Հիմա բուն էության մասին: Ես 2 ժամ կարող էի քարոզել այն մասին, թե ինչ է նշանակում լինել Հիսուսի նման: Ես դա այստեղ արել եմ շատ անգամ ավելի, քան 2 ժամ՝ տարբեր ժամանակներ կատարելով ավելացումներ: Եթե գոյություն ունի Քրիստոսին նմանվելու էության գաղափար, ապա այն պետք է սկսվի արմատից: Ահա այդ արմատներից մեկը՝ «յափշտակութիւն չհամարեց Աստծուն հավասար լինել: Այլ իր անձն ունայնացրեց, եւ ծառայի կերպարանք առնելով…»: Դուք կարող եք ուսումնասիրել Հիսուսի կյանքը, նստեք և կարդացեք որևիցե ավետարան սկզբից մինչև վերջ, և արմատը ակնառու է դառնում: Նա վերաբերվում էր այս կյանքին այնպես, կարծես ապրելու համար գոյություն ուներ միայն մեկ նպատակ. որ Նա կարողանար կատարել Իրեն ուղարկող Հոր կամքը: Յուրաքանչյուր պահանջ, յուրաքանչյուր բնական ուժ, որը փորձում էր մրցել դրա հետ, նա մի կողմ էր նետում:

Դեռ մանուկ հասակում Նրա ծնողները չափից շատ պահանջներ էին ներկայացնում Նրան: Նա ասաց. «Դուք չգիտե՞ք, թե պետք է, որ ես իմ Հոր տանը լինեմ»: Երբ Նա սկսեց հայտնել Իր կոչումը, Նրա ընտանիքը կարծեց, թե խելքը թռցրել է: Վշտացնելով Իր մորը՝ Նա ստիպված էր ասել. «Նրանք են իմ հարազատները, ովքեր կատարում են ինձ ուղարկող Հոր կամքը»: Դա պետք է, որ ուժեղ հարված լիներ Նրա մոր համար: Հենց որ աշակերտները, որոնք իրենց ուրույն գաղափարներն ունեին Աստծո արքայության վերաբերյալ, հավաքվեցին Նրա շուրջը, ի վերջո Իրեն ամենից մտերիմ աշակերտին Նա ստիպված եղավ ասել. «Յետս գնա, սատանայ … դու միտք չես անում Աստուծոյ՝ այլ մարդկանց բաները»: Ի վերջո, Նա պետք է պայքարեր Իր իսկ շնչի հետ: Ես արդեն նշել եմ, որ Գողգոթան սկզբունքայնորեն փաստ դարձավ նախքան գործող ուժ ունենալը:

Երբ Նա աղոթում էր այդ այգում, Նրա մազանոթները պայթեցին և քրտինքի փոխարեն արյուն հոսեց: Այնտեղ Նա ասաց…. կարծում եմ ես սա ասել եմ և դա էլ նկատի եմ ունեցել, այո, իմ կյանքում հազարավոր անգամ արել եմ այդպես: Երբևիցե այդքան չեմ կրկնել այդ խոսքերը, քան անցած 3 օրվա ընթացքում. «Իմ Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի», քանի որ դեռ շատ բաներ եմ ես ցանկանում: Կան բազում բաներ, որոնք ես ցանկացել եմ դեռ մեկ ամիս առաջ, բայց այլևս հոգ չեմ անում դրանց համար, քանի որ Աստված լուծել է դրանց հարցը: Բայց կան բաներ, որոնց մասին ես խորը իմ ներսում գիտեմ, որ եթե կարողանայի Աստծո ձեռքը շարժել դրանց համար, ապա անկասկած կանեի դա: Ես ի վերջո սկսում եմ հասկանալ, որ ես պետք է այդ ամենը Նրան հանձնեմ: Եթե սանձը իմ ձեռքում լինի, ապա Նրա նպատակը կխափանվի: Դրանից կստացվի Իր պատկերի և իմ մի փոքր ցանկության խառնուրդը:

Ես այսօր այստեղ չեմ, որպեսզի ասեմ, որ ես արդեն ամենը կարգավորել եմ, բայց ես ձեզ կարող եմ ասել, որ որոշ բաներ սկսում են կարգավորվել:

Հիսուսը երբեք չի ունեցել իմ կամ ձեր տատանումները: Նա դիմակայեց մինչև վերջ և կարգավորեց ամեն բան. «Եթե կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի»: Մենք ձեզ հետ խոսել ենք Խաչի մասին Բարի ուրբաթի ժամանակ, այն իրականում պետք է կոչվի «Վատ ուրբաթ»: Մենք մշուշով պատել ենք այն իրականությունը, ինչի միջով Նա անցավ, և ես չեմ կարծում, որ մարմինն ու արյունը կարող են պատկերացնել Նրան, ում մասին Եբրայեցիս գիրքը ասում է. «Ասաց և ոչնչից երկիրը ստեղծեց»: Խաչի վրա կախված և ծաղրանքի առարկա դարձած՝ Նա կարողացավ ասել. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չգիտեն թե ինչ են անում»: Փառքի Արքան այդ օրը մահացավ իմ և քեզ համար. Նա պայքարի մեջ մտավ այդ պարտեզում և, ունենալով նույն մարդկային ցանկությունները, որոնք ունենք մենք, Նա ասաց. «Ոչ թե իմ կամքը, բայց քո կամքը լինի»:

Մեկընդմիշտ հարվածիր այդ ծեր ու հիմար ոչխարի գլխին, դադարիր անսանձ ու ըմբոստ ձիուկ լինելուց և կավ դարձիր: Սկզբունքը չի փոխվելու և Աստված չի գնալու զիջումների և չի հարմարվելու մեզ: Նա միայն մեկ տեսակի նյութ է ցանկանում՝ պատասխան չտվող կավ: Նրան են վերապահված բոլոր իրավունքները: Առևտուրը, հարմարեցումը և բանակցությունները տեղ չունեն: Նա արդեն հայտնել է Իր ծրագիրը: Նա հետաքրքրված չէ մի խումբ «Ժենեի տղերքով», այլ Նրա ցանկությունն է «փոքրիկ Քրիստոսներ» տեսնելը: Քո աշխատանքը, ամուսնությունը, ընտանիքը և այն ամենը, ինչի մեջ դու ներգրավված ես, հանդիսանում են Աստծո աշխատանքը, և Նա քեզ հետ է այդ ամենի մեջ: Բայց նախ և առաջ, մեր բոլոր իրավիճակներում Աստված ցանկանում է Իր պատկերը հայտնելու հնարավորություն ունենալ:

Այսպիսով երրորդ բառն է «գործընթաց»: Ինչ է գործընթացը: Նկատի ունեմ, որ երբ ես հասկացա, որ Աստված է ղեկավարը, ես բավականաչափ կոտրվեցի այն նպատակով, որ ի վերջո հասկացա, որ Նա ցանկանում է ինձ Հիսուսի նման դարձնել…կարո՞ղ է ստեղծագործական մարդ եմ դառնում: Ես Նրան թելադրում եմ, թե ինչպես Նա պետք է ինձ Հիսուսի նման դարձնի, և Նա անընդհատ դա խառնաշփոթի է վերածում, որովհետև բռնում է ինձ, շպրտում այդ ճախարակների վրա և պտտում: Ինձ դա դուր չի գալիս: Դա ինձ ձևից գցում է: Ահա ես, նստած իմ ճախարակների վրա, հակառակվում եմ բրուտի տան սկզբունքին, տրտնջում եմ ծածկի առկայության կամ նրա բացակայության համար, արագության, ուղղության և անկյան համար: Ճախարակները ոչ ավել, ոչ պակաս այն իրավիճակներն են, որոնց մեջ դու հայտնվել ես: Դա Հռոմեացիս 8-րդ գլխի մյուս հատվածի նշանակությունն է. «Աստված մտնում է բոլոր բաների մեջ և ի բարին գործում»:

Իրականում ես հավատում եմ, որ եթե հոգևոր բացատրություն տանք այն ցավերին, որոնց միջով ես անցել եմ վերջին օրերին, ապա ես կասեի, որ Աստված մտել է դրանց մեջ, որպեսզի գործածի դրանք Իր համար: Նա ստույգ գիտի, թե ինչ է հարկավոր, որպեսզի ինձ ձևավորի և որ դիրքում ինձ դնի, որպեսզի կարողանա աշխատել ինձ հետ: Ես հավատում եմ նրան, ինչ քարոզել եմ տարիների ընթացքում. եթե դու ցանկանում ես Աստծո կամքը, իրականում ցանկանում ես այն, ապա կասեմ, որ ավելի դժվար է դուրս գալ դրանից, քան մնալ դրա մեջ: Որոշ մարդիկ խառնաշփոթի մեջ են, առավոտից մինչև գիշեր փորձում են գտնել Աստծո կամքը: Եթե դու ստույգ չգիտես այն, ապա տեղիցդ վեր մի թռչիր ինչ-որ բան անելու համար: Մնա այնտեղ, որտեղ կաս, քանզի Աստված չի առաջնորդում դեպի անորոշություն: Աստծո խոսքն ասում է. «Տերիցն է մարդիս քայլերի յաջողութիունը»: Աստծո խոսքն ասում է. «Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, եւ նա կուղղէ քո ճանապարհները»: Աստված պահմտոցի չի խաղում: Նա

սադիստ չէ: Նա չի ուղարկել Իր Որդուն, որպեսզի մեզ գտնի՝ ինչպես մոլորված ոչխարի, ապա թաքնվի մեզանից:

Եթե ես և դու մեր կյանքը հանձնենք Աստծո ձեռքերի մեջ, Նա կառաջնորդի այն: Մեր խնդիրը կայանում է նրանում, որ մենք գալիս ենք Նրա մոտ և հանկարծ մեզ դուր չէ գալիս այն ճանապարհը, որով Նա տանում է մեզ, կամ էլ սայթաքում ենք և խառնում ամեն բան և դրանից հետո, երբ Նա մեկնում է ձեռքը, որպեսզի կարգի բերի ամենը, մեզ դա դուր չի գալիս: Ճախարակները այն իրավիճակներն են, որոնց մեջ դու հայտնվել ես և Աստված պատրաստվում է մտնել դրանց մեջ ու բրուտի ձեռքի նման աշխատել մեզ հետ:

Պետրոսը սովորեցրել է սրա մասին: Նա չի խոսել բրուտի տան մասին, բայց դա հենց այն է, ինչ նա ասում է ողջ Ասիայով սփռված քրիստոնյաներին: Աստված հստակ գիտի, թե ինչ է անհրաժեշտ՝ մեզ ձև տալու համար: Բրուտը հստակ գիտի, թե ինչ արագությամբ պետք է պտտվեն ճախարակները, հստակ գիտի անկյունը և կավը տեղադրելու ձևը: Նա գիտի, թե որտեղ պետք է դնի կավը, որ հետո իր ձեռքին հարմար լինի աշխատել դրա վրա: Ես նայել եմ, թե ինչպես է աշխատում բրուտը, նա բացարձակապես չի շեղում իր ուշադրությունը, երբ աշխատում է ճախարակների վրա, արագացնում և դանդաղեցնում է նրանց աշխատանքը և կավը դնում նրանց վրա: Հենց սրա մասին է ասում Պետրոսը ողջ Ասիայով սփռված քրիստոնյաներին: Նա չի ասում. «Եթե դուք աղոթեք կամ գնաք այսինչ քարոզչին լսելու կամ կարդաք այս գիրքը կամ էլ գնաք այսինչ կոչված փողոցի անկյունում գտնվող գրախանութը, ապա դուք կգտնեք ձեր հյութամզիչից դուրս պրծնելու հստակ ուղին: Նա ասում էր. «Մեծարեք Աստծուն, թող ձեր կյանքը ցույց տա որոշակի բաներ, և այդ հյութամզիչը կդառնա միջոց, որի օգնությամբ Աստված կմզի ձեր էության այն կողմը, որից պետք է հրաժարվել: Եվ եթե դու հյութամզիչի մեջ չես, դու չես տեսնի այդ կողմերը: Դու երբեք չես իմանա, որ հավատք չունես, մինչև որ քեզ չմտցնեն հյութամզիչի մեջ, որը երևան կբերի քո հավատքը:
Դու երբեք չես կարող պարզել, թե ինչ աստիճան կարող ես բարկանալ, մինչև ինչ-որ բան քեզ չբարկացնի այնպես, որ դու կարողանաս շտկել քո էության այդ կողմը:

Ինձ դուր չի գալիս երեսը: Եթե դուք ուզում եք իմանալ, թե ես ինչ կանեի այն ճախարակի հետ, որի վրա Աստված ինձ դրել է վերջին 2 շաբաթվա ընթացքում, ես երկսայրի կացին կօգտագործեի դրա վրա: Այն, ինչ ես մի քանի անգամ կանեի այդ ճախարակի հետ, կարող էր մրցել նրա հետ, թե ինչ է քարաջարդ մեքենան անում ժայռին, եթե իհարկե Աստված թույլ տար, որ ամեն բան իմ ուզածով լիներ: Մնա ճախարակի վրա: Դադարիր հարձակվել ճախարակի վրա: Բաց եղիր այն ձեռքի համար, որն աշխատում է քեզ հետ: Շրջիր աչքերդ այդ ճնշումից: Դադարիր ըմբոստանալ, դադարիր տրտնջալ և խույս տալ, որովհետև Աստված ցանկանում է, որ մենք լինենք կավի նման: Այս համանմանության խնդիրը կայանում է նրանում, որ մենք կավ չենք և, ի տարբերություն կավի, մենք ընտրության իրավունք ունենք: Դադարիր պայքարելուց և թույլ տուր Նրան կատարել Իր աշխատանքը:

Վերջին բանը, որը ես ցանկանում եմ ասել նպատակի և գործընթացի մասին, նկարագրված է Նոր կտակարանում: Ես չգիտեմ, թե ինչպես բացատրեմ դա: Բայց երբ ես նայում էի բրուտի աշխատանքին, ես չեմ կարծում, որ կա որևիցե աշխատանք, որը ես երբևէ տեսել եմ, անգամ նկարչի աշխատանքը, որ այդքան կենտրոնացած լինի իր նպատակի վրա, ինչպիսին բրուտի աշխատանքն է ճախարակի և դրա վրա պտտվող ամանի վրա: Նա իր ողջ ուշադրությունը տալիս է իր գործին:

Երբ գործ ունենք Աստծո հետ, համանմանությունը այդքան էլ չի գործում: Ես չգիտեմ, թե ինչպես բացատրեմ դա, օգտագործեմ Հիսուսի խոսքերը, երբ Նա ասում է. «Ձեր գլխի մազերը հաշված են»: Նա տեսնում է անգամ ճնճղուկի վայր ընկնելը: Տեսնելով Աստծո ամենագիտությունը և զորությունը՝ ձեզանից ոմանք, որ գտնվում են ճախարակների վրա և ձևափոխության ենթարկվում, կկարողանայիք հույս գտնել: Աստված ունի այդ կարողությունը և ոչ միայն ունի, այլև աշխատում է մեզանից յուրաքանչյուրին պահել ուշադրության կենտրոնում, ինչպես որ բրուտն է իր ողջ ուշադրությունը տալիս այն ամանին, որի վրա աշխատում է:

Սատանան փսփսացել է իմ ականջին: Ես հուսահատ ասել եմ. «Աստված, օգնիր ինձ»: Դա մեծ մասամբ իմ մարմնի ճիչն էր. «Օգնիր իմ ուզածով շարժվել»: Բայց ես նորից եկա այն հասկացողությանը, որը իմացել եմ իմ ողջ կյանքի ընթացքում, բայց երբեք այդպես չեմ գիտակցել. ես Աստծո ձեռքերի մեջ եմ: Դուք էլ եք Աստծո ձեռքերի մեջ:

Ես կարող եմ մեջբերել մի սաղմոս, որը անընդհատ կրկնում եմ, այն գործում է այսօր ինձ և ձեզ համար. «Դու գիտես իմ նստիլն ու վեր կենալը, հեռուանց իմանում ես իմ մտածմունքները»: Երբ ես անգամ բառերով չեմ կարող արտահայտել, Դու հասկանում ես: «Եթե արշալույսի թեւերն առնեմ եւ ծովի վերջի ծայրերումը բնակուեմ, այնտեղ էլ քո ձեռքը կառաջնորդէ ինձ, եւ քո աջը կպահէ ինձ: Եւ եթե ասեմ. թող խաւարն ինձ ծածկէ. այն ժամանակ գիշերն էլ լոյս կլինի իմ շուրջը»: Նա տեսնում է ամեն ինչի միջով, անկախ նրանից՝ ես տեսնում եմ, թե ոչ: Ինչպես ասել եմ, չնայած նրան, որ ես ավելի շատ սովորում եմ փորձառության միջոցով, այն Խոսքը, որ քարոզվել է, ճշմարիտ է եղել: Ես ասել եմ. «Խավարի մեջ մի կասկածիր այն, ինչ Աստված ասել է քեզ լույսի մեջ»:

Աստծո խոսքն ասում է, և ես կառչում եմ նրանից. «Բայց Աստուած հաւատարիմ է, որ չի թողիլ ձեզ ձեր կարողութիւնիցը վեր փորձուելու, այլ փորձութեան հետ ելքն էլ կպատրաստէ»: Հունարենում գրված է, որ ձեր փորձությանը համապատասխան Աստված փախուստի ճանապարհ է պատրաստել և բանալին դռան մեջ է դրել : Նա փրկության ուղի ունի այն մարդկանց համար, որոնք երբևէ չեն գնում այդ ուղիով, որովհետև Նրա էությունը այնպիսին է, որ աշխատելով ինձ և քեզ հետ՝ այդ ճախարակների վրա, այսինքն՝ճնշման տակ, Նա արդեն ունի պատասխան մեր խնդրի համար:

Ես չգիտեմ, թե որն է քո խնդիրը: Բայց վստահ գիտեմ, թե որն է իմ խնդիրը: Ես գիտեմ իմ խնդիրների պատասխանները, բայց ես գալիս եմ այն եզրահանգման, որ քանի դեռ Նա պտտում է ինձ ճախարակի վրա, որը Նրա կամքն է, ապա Նրա ձեռքը կիրագործի Իր կամքը:

Հիմա թույլ տվեք վերջացնեմ: Ես ասացի, որ վերջին բառն է մնացել. «Անձ»: Հին կտակարանում բրուտի տան պատկերը բավականին բարդ է: Եթե նա չի կարողանում ամանը պահել հսկողության տակ, ապա այն անարգվում և շպրտվում է բրուտի հողամասի մեջ: Ահա այդպես: Ինձ զարմացնում է, որ Հիսուսը Հուդային ընկեր կոչեց, երբ նա եկավ մատնելու Նրան: Նրանից հետո, որը Հուդան հասկացավ իր գործածի իրականությունը, նա փորձեց իրեն մաքրել հանցանքից: Նա վերադարձավ քահանաների մոտ, և Գիրքն ասում է, որ նա վերցրեց այդ 30 արծաթը և գետնին նետեց: Դրանք Հիսուսի կյանքի գինն էին, գին, որով նա վաճառեց Հիսուսին, չիմանալով, որ Նա գնում է փրկելու աշխարհը:

Բրուտի տան մասին պատմության վերջին ակնարկը վերաբերում է նրան, որ քահանաները վերցրեցին այդ արծաթը և գնեցին բրուտի ագարակը: Ես չեմ կարծում, որ սա պատահականություն է, որ Աստված այնպես վերահսկեց հանգամանքները, որ Հիսուսի կյանքի գինը, որի միջոցով գնվեց մեր փրկությունը, իր հանգրվանը գտավ մի ագարակի ձեռք բերման մեջ, որտեղ գտնվում էին բոլոր մերժված և կոտրտված ամանները: Դրանք Աստծո հետ փոխհարաբերություններում ձախողված կյանքի խորհրդապատկերն էին: Այդ բոլոր ամանները թաղված էին այդ ագարակում, որը գնվեց Հիսուսի կյանքի գնով: Դա Աստծո անջնջելի հետքն էր, որն ասում է. «Դուք ունեք ևս մեկ հնարավորություն»: Դա նման չէ Հին Կտակարանի անսասան սկզբունքներին:

Հիսուսի կյանքի դիմաց վճարված գումարով գնվեց մի ամբողջ ագարակ, եթե չեք ցանկանում փոխաբերական իմաստով, ապա ուղիղ խոսքով ասած, մեջբերեմ Մաթևոսի 13-րդ գլխից, որտեղ ասվում է, որ Աստված գին վճարեց ամբողջ ագարակի համար, որպեսզի ձեռք բերի այնտեղի գանձը: Երբ մտածում եմ, թե Աստված ինչ է սովորեցրել և ինչի միջով է ինձ անցկացրել այս տարիների ընթացքում, հանգում եմ այն մտքին, որ երբեք բավականաչափ արժանի չեմ եղել Աստծուն: Աստծո համար այսպես քրտնաջան աշխատելու պատճառներից մեկը հենց այս անարժան լինելու զգացողությունն է: Սա ինձ տալիս է վստահություն, որ Աստված սովոր է անպիտան անոթների հետ գործ ունենալ, և Հիսուսի կյանքի դիմաց վճարված գինը վճարված է այսօր ինձ լսող յուրաքանչյուր մարդու համար, եթե Աստծո Հոգին թափանցել է նրա ներսը…..

Ծառայությունը սկսելու ժամանակ ես սկսեցի խոսել մի բանի մասին և կարծում եմ հիմա ճիշտ ժամանակն է ասել դա: Հունարենում «խոցել» բառի համար գոյություն ունի երկու բառ. առաջին բառը օգտագործվում է այն ժամանակ, երբ հռոմեացի զինվորը սրով խոցում է Հիսուսին, բայց մեկ այլ բառ է օգտագործված Գործք առաքելոց 2-րդ գլխի մեջ, այնտեղ գրված են Պետրոսի խոսքերը. «երբ այս լսեցին, իրանց սրտերումը զղջացին» (անգլերեն թարգմանության մեջ գրված է «խոցվեցին»): Այստեղ օգտագործվում է մեկ այլ Հունարեն բառ, որը նշանակում է «ավելի խորը խոցվել»: Այսպիսով Աստծո Խոսքը Հոգու օծությամբ ավելի խորն է խոցում, քան Հռոմեացի զինվորի սուրը, երբ նա խոցեց Հիսուսին: Երբ Աստծո Խոսքը խոցում է, նշանակում է, որ պետք է անպատճառ մարդիկ լինեն, որոնք կգիտակցեն, որ չեն համագործակցել Աստծո հետ՝ որպես բրուտի:

Եվ այսպես Նա գնեց մի ամբողջ ագարակ՝ լի անպիտան, վնասված և կոտրտված անոթներով: Այսպիսով ինչու՞ ետ չվերադառնաք և թույլ չտաք Նրան նորից սկսել Իր աշխատանքը ձեզ հետ: Բայց պետք է ասեմ, որ պայմանները չեն փոխվելու: Նա մնալու է ղեկավարը: Նա շարունակ աշխատելու է Իր նպատակին հասնելու համար: Այդ բոլոր պայմանները չեն փոխվում: Նա շարունակ իրականացնելու է ողջ գործընթացը և շարունակ ցավացնելու է, իսկ ճախարակները շարունակ հարմար չեն լինելու: Բայց շնորհակալություն Աստծուն, որ մենք նորից կարող ենք սկսել: Յուրաքանչյուր անպիտան անոթ, որ ներկա է այսօր այստեղ, յուրաքանչյուր անպիտան անոթ, որը լսում է ինձ այսօր, իմացեք, որ Վարպետ Բրուտը կարող է աշխատել ձեզ հետ, եթե դուք Նրան թույլ տաք:

Աստված շարունակում է Իր աշխատանքը ձեր հովվի հետ: Ինձ համար ավելի հեշտ է աղոթել, քան քարոզել, բայց Աստված ինձ այսօր չէր առաջնորդի քարոզել սրա մասին, եթե այստեղ չգտնվեին այնպիսի անոթներ, որոնք պայքարում

են ճախարակների հետ և անոթներ, որոնք կարիք ունեն նորից հստակ իմանալ և գիտակցել, թե ով է ղեկավարը ու հնազանդվեն Նրա գործընթացին:

Եթե դուք լսել եք ինձ հեռուստատեսությամբ այս շաբաթ ավելի վաղ քարոզելիս, ապա ես մեջբերել եմ Չառլզ Ֆինեյի խոսքերը: Նա մեկ անգամ ասել է, որ բարոյապես սխալ է պարզապես քարոզել Աստծո Խոսքը՝ որպես տեսություն և այն չկիրառել: Մենք բոլորս այսօր այստեղ կավի գնդեր ենք: Մենք բոլորս ունենք պատվամոլություն, մենք բոլորս ունենք մեր ցանկությունները և կարիքները, ներգրավված ենք տարբեր բաներում, սակայն վերջնագիծը կայանում է նրանում, թե արդյոք մենք ցանկանում ենք թույլ տալ Աստծուն կատարել և ունենալ այն, ինչ Նա է ցանկանում:

Անցյալ կիրակի ես եզրափակեցի իմ քարոզը՝ ասելով, որ ցանկանում եմ, որ այս եկեղեցին և այս հովիվը լինեն մի տեղ, որտեղ Սուրբ Հոգին կարող է հանգիստ գտնել: Այսօր ես ասում եմ, որ ցանկանում եմ, որ այս եկեղեցին և այս հովիվը լինեն մի տեղ, որտեղ Աստված կարող է գտնել կավ, որի վրա Նա կարող է աշխատել: Եթե 75 մորավյան եղբայրները կարող էին ցնցել աշխարհը և սկիզբ դնել Մեթոդական, ինչպես նաև Փրկության Բանակի շարժումներին, ի՞նչ եք կարծում, ինչ կարող է անել Աստված մեզ հետ, եթե մենք մեր անձերը՝ անպիտան և կոտրված անոթները, կրկին տրամադրենք Բրուտին:

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են